



ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ



ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

#3 | Նոյեմբեր 2017թ. |

Մեկնարկեց «Հայաստանի էներգետիկ ոլորտում ներդրումային ռիսկերի մեղմացում» խորագրով համաժողովը

Ս.թ. նոյեմբերի 7-ին Հիլթոն հյուրանոցում մեկնարկեց «Հայաստանի էներգետիկ ոլորտում ներդրումային ռիսկերի մեղմացում» խորագրով համաժողովը, որը կազմակերպվել է Եվրոպական միության և էներգետիկ Խարտիայի կողմից: Համաժողովին ներկա էին ոլորտին առնչվող պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի, ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ: Համաժողովի նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրներին բարելավել էներգետիկ ոլորտը, էներգետիկ անվտանգությունը, ձևավորել բարենպաստ միջավայր ներդրողների համար, ինչպես նաև խթանել էներգախնայողության արդյունավետությունը եւ վերականգնվող էներգիայի օգտագործումը տարածաշրջանում:



Չգազաֆիկացված համայնքներում աշխատանքները շարունակվում են

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի և ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ-ի հետ համատեղ իրականացնում են Հայաստանում չգազաֆիկացված համայնքների էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում չգազաֆիկացված համայնքների բնակիչների կողմից միայն նոյեմբեր ամսվա ընթացքում ստացվել է 159 հայտ, որի ուսումնասիրության արդյունքում տրվել է 155 դրական եզրակացություն, 4 հայտ մերժվել է:



Մեկնարկեց «Հայաստանի էներգետիկ ոլորտում ներդրումային ուսկերի մեղմացում» խորագրով համաժողովը

Ա.թ. նոյեմբերի 7-ին Հայաստանում եվրոպական միության պատվիրակությունը, էներգետիկ խարտիայի հետ համատեղ կազմակերպել է բարձրաստիճան համաժողով՝ Հայաստանի բնակելի և



հանրային նշանակության շենքերում էներգախնայողության ներուժի բացահայտման թեմայով: Համաժողովի նպատակն էր դոնորների, միջազգային ֆինանսական հաստատությունների, պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչների, ինչպես նաև ՀԿ-ների և փորձագետների հետ քննարկել Հայաստանում էներգախնայողության և էներգաարդյունավետությանն առնչվող խնդիրները:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը նշեց, որ կառավարության կողմից հստակ քայլեր են իրականացվել էներգախնայողության ոլորտում՝ սկսած օրենսդրական բարեփոխումներից՝ ավարտած հանրային և բնակելի շենքերում իրականացված ծրագրով նաև նշեց, որ բանկերում առկա է 200մլն եվրոյից ավել միջոցներ էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների համար:



Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչ Լորենս Մերեդիթը էներգախնայողության ոլորտում Հայաստանի կողմից կատարած աշխատանքները բարձր գնահատեց և նշեց, որ էներգախնայողության և էներգաարդյունավետության ոլորտում համագործակցությունը և ներդրումների ներգրավումը շատ կարևոր է:



Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Արմեն Մելիկյանը խոսեց Հայաստանում էներգախնայողությանը և կայուն ֆինանսավորմանը խոչընդոտող գործոնների մասին, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության համայնքների էներգախնայողության ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի համայնքներում բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը, հիմնադրամի գործունեությունը էս ոլորտում, ինչպես նաև խոսեց

չգազաֆիկացված համայնքների ծրագրից:

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» ծրագիրը

Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է աջակցել էներգախնայողության միջոցառումների ֆինանսավորմանը Հայաստանի ՓՄՁ-ներում: Ծրագիրը շարունակվում է և ծրագրի շրջանակներում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի փորձագետների կողմից իրականացվել է 155 էներգետիկ ուսումնասիրություն:

Ծրագրի շրջանակները`

168 էներգետիկ ուսումնասիրություն, որոնցից`

- 152-ը պարզեցված էներգետիկ ուսումնասիրություն` (ներդրման գումարը ոչ ավել 80 մլն ՀՀ դրամից)
- 12 էներգետիկ ուսումնասիրություն` (ներդրման գումարը 80 մլն ՀՀ դրամից ավել)
- 2 նախնական էներգետիկ գնահատում

Պարզեցված էներգետիկ ուսումնասիրություններից 2-ը ստացել են բացասական եզրակացություն:

Ծրագրի 2016թ. օգոստոսից 2017թ. նոյեմբերի 30-ը ժամանակահատվածի հիմնական ցուցանիշները.

Դրական եզրակացությամբ հայտերի քանակը`

164 հայտ

Ներկայացված վարկի գումարը`

5,603 մլն. դրամ

ԷԽՄ-ներին ուղղված ներդրումը`

5,466 մլն. դրամ

Ակնկալվող էներգախնայողությունը`

443,030,817 կՎտժ

Էներգաարդյունավետությունը`

36.8 %

CO2 արտանետումների կրճատում`

164,115 տոննա

Ծրագիրը շարունակվում է:

Իրականացված էներգախնայողության ծրագրի արդյունքներ

Պետական կամերային երաժշտական թատրոն

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը էներգախնայողության ծրագրի շրջանակներում պետական կամերային երաժշտական թատրոնում իրականացվել է հետևյալ աշխատանքները` ոչ էներգաարդյունավետ պատերի ջերմամեկուսացում, պատուհանների փոխարինում էնգաարդյունավետ պատուհաններով, արտաքին դռների



փոխարինում էներգաարդյունավետ դռներով, տեղադրվել են վիտրաժներ, ծածկի ջերմամեկուսացում, լուսավորության և բեմային լուսագունային համակարգերի իրականացում լուսադիոդային լամպերով: Իրականացված էներգախնայողական միջոցառումների շնորհիվ թատրոնում **էներգիայի ծախսերի խնայողությունը կազմում է շուրջ 57,8%**: Պետական կամերային երաժշտական թատրոնի տնօրեն Վարդան Գրիգորյանը իր գոհունակությունը հայտնեց կատարված աշխատանքների համար:

5 ՓԱՍՏ ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Արևային էներգիան երկիր մոլորակի ամենամեծ էներգիայի ռեսուրսն է.

Երկիր մոլորակի արևային ռեսուրսները բավարար է , որպեսզի ապահովի մարդկության էներգետիկ պահանջները ամբողջ տարվա համար: Մարդկությունը էներգետիկ կարիքները բավարարելու համար կարող է հրաժարվել մյուս բոլոր էներգիայի աղբյուրներից եթե սկսի օգտագործել արևային էներգիան իր ողջ ծավալով:

Արևային էներգիայի կայանները կարող են շահագործվել ավելի քան 40 տարի

Սովորաբար, երբ կառուցվում է արևային էներգիայի կայանը, ձեռք է բերվում համաձայնություն այն մասին, որ այն շահագործվի 20-25 տարի: Սակայն, այս փաստը բնավ չի նշանակում, որ այն չի կարող շահագործվել ևս 20 տարի: Ծիշտ է, արևային պանելները չեն կարող շահագործվել մինչև 40 տարի, բայց արևային կայանները իրենց ամբողջ կառուցվածքով շատ մեծ արժեք են ներկայացնում:

Ավելին, արևային պանելները կարող են փոխարինվել ավելի էֆեկտիվ պանելներով, որը հնարավորություն է տալիս երկարացնել արևային կայանի շահագործման ժամանակահատվածը:

2016թ.-ին կառուցված էլեկտրաէներգիայի կայանների 39%-ը բաժին է հասնում արևային էներգիային

Համեմատության համար կարելի է նշել, որ 2010 թվականին նոր կառուցված էլեկտրաէներգիայի կայանների միայն 4% է բաժին հասնում արևային էներգիային: Ավելին, այս ցուցանիշը մեծանում է տարեցտարի, քանի որ արևային կայանների կառուցման համար պահանջվող ծախսերը փոքրանում են:

Արևային կայանի կառուցման համար անհրաժեշտ է ավելի քիչ ժամանակ քան այլ ցանկացած էներգետիկ համակարգ կառուցելու համար

Աղետի ժամանակ ոչ մի այլ էլեկտրաէներգիայի աղբյուր չի կարող կառուցվել ավելի արագ, քան արևայինը:

Երևան, Հայաստան Հանրապետություն
Սայաթ- Նովա պողոտա 29/1
Հեռ./Ֆաքս +374 10 588011
Էլ.հասցե` info@r2e2.am
Էլ.կայք` www.r2e2.am

